

ԻՐԱՎՎՈՒՆԹՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ  
ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԿ



«ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանության հիմնահարցերը ՄԱԿ-ի երեխայի իրավունքների կոնվենցիայի և զինված հակամարտություններին երեխաների մասնակցությանը վերաբերող կամընտիր արձանագրության երաշխիքներին համահունչ»

*Տեղեկանք*



Երևան, 2015



*Համառոտ տեղեկանք «ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանության հիմնահարցերը ՄԱԿ-ի երեխայի իրավունքների կոնվենցիայի և զինված հակամարտություններին երեխաների մասնակցությանը վերաբերող կամընտիր արձանագրության երաշխիքներին համահունչ» զեկույցի և վեր հանված խնդիրների վերաբերյալ:*

Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է ինչպես ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների մասին» Կոնվենցիան, այնպես էլ «Զինված հակամարտություններին երեխաների մասնակցության վերաբերյալ» կամընտիր արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն)՝ 2005թ-ի մարտի 21-ին, որը ուժի մեջ է մտել Նույն թվականի հոկտեմբերի 30-ին: Արձանագրությամբ արգելվում է 18 տարեկանից ցածր տարիքի երեխաների ներգրավվածությունը զինված հակամարտություններին: Այն անդամ երկրներին պարտավորեցնում է ներպետական օրենսդրությունն ու իրավակիրառ պրակտիկան հարմարեցնել Արձանագրության պահանջներին ու սահմանված սկզբունքներին: Չնայած նախատեսված արգելքին, դեռևս առկա են խնդիրներ կոնվենցիայով և արձանագրությամբ ամրագրված երաշխիքներն ու սկզբունքները Հայաստանում լիարժեքորեն կյանքի կոչելու հարցում: Մասնավորապես, մտահոգության տեղիք է տվել այն հանգամանքը, որ գործող զինվորական կրթական համալիրներում 18 տարին չլրացած երեխաները կրթության ընթացքում զենքի կրման ու օգտագործման վերապատրաստումներ են անցնում և ռազմական խորը հմտություններ ձեռք բերում դեռևս վաղ տարիքից: Նույն մտահոգությունը կապված է նաև հանրակրթական դպրոցներում զինվորական պատրաստման դասընթացների հետ: Մասնավորապես, Կոմիտեն ուշադրություն է դարձրել այն հանգամանքին, որ հանրակրթական դպրոցներում 8-րդ դասարանի ծրագիրը պարունակում է «Քաղաքացիական պաշտպանություն» առարկան, որը իրենում պարունակում է զենքի կրման և օգտագործման հետ կապված վարժություններ և պատրաստվածություն: Նմանապես, Փոքր Միեր կրթահամալիրի ծրագիրը պարունակում է զենքի ակտիվ օգտագործմամբ վերապատրաստումներ, այն դեպքում, երբ այնտեղ ընդունելությունը թույլատրվում է 14 տարեկանից: Նույն խնդիրը արձանագրվել է նաև Մոնթե Մելքոնյանի անվան ռազմական կրթահամալիրի կապակցությամբ: Այստեղ, որպես հավելյալ խնդիր, դիտարկվել է այն հանգամանքը, որ սովորողների մեծ մասը խնամքի կենտրոնների սաներ և անապահով ընտանիքների երեխաներ են:

Կոմիտեն իր մտահոգությունն է հայտնել այն կապակցությամբ, որ հստակ կանոնակարգումների բացակայության պարագայում 18 տարեկանը չլրացած երեխաները կարող են ընդունվել ռազմական ինստիտուտներ և վերջիններիս վերաբերվեն որպես զինվորականների, ինչով պայմանավորված հնարավոր կլինի զինված հակամարտությունների ժամանակ զինված ուժեր նրանց համալրումն ու հակամարտություններին ուղղակի մասնակցությունը:

Այս կապակցությամբ Կոմիտեն առաջարկել է հանրակրթական դպրոցների ծրագրերից հանել զինվորական պատրաստությունն ու արգելել զենքի կիրառմամբ

վարժությունները 18 տարեկանը չլրացածների համար: Ինչպես նաև բացառել 18 տարեկանը չլրացածների ներգրավումը զինված բախումներին, զինվորական կարգապահության ու պատասխանատվության ենթարկելը<sup>1</sup>:

Սույն զեկույցի միջոցով կազմակերպության կողմից փորձ է արվել պարզել Հայաստանի Հանրապետությունում անչափահասների զինվորական կրթության համար առկա հնարավորություններն ու կրթության կազմակերպման պրակտիկան՝ ինչպես մասնագիտացված զինվորական, այնպես էլ հանրակրթական դպրոցներում: Ընդհանուր առմամբ, զեկույցի և ուսումնասիրության հիմնական նպատակն է վեր հանված օրենսդրական և պրակտիկ խնդիրների լուծման համար առաջարկությունների ներկայացումը՝ երեխաների իրավունքների և հատկապես, կրթության իրավունքի լիարժեք ապահովման համար:

Զեկույցը պատրաստվել է՝ հիմք ընդունելով միմյանց փոխլրացնող մի քանի մեթոդներ, որոնք հնարավորություն են տվել արդյունավետությամբ հավաքել և ներկայացնել հավաքագրված տեղեկատվությունը: Զեկույցի պատրաստումը իրականացվել է **երեք հիմնական փուլերով**՝ նախապատրաստական, տեղեկատվության հավաքման, արդյունքների մշակման ու ամփոփման: Նախապատրաստական փուլում իրականացվել է ոլորտը կարգավորող ներպետական օրենսդրական դաշտի և միջազգային լավագույն փորձի համեմատական ուսումնասիրություն, ինչի հիման վրա դուրս են բերվել օրենսդրության հիմնական խնդիրներն ու բացերը, ինչպես նաև մշակվել են հարցաշարեր՝ տեղեկատվության հավաքման փուլի համար: Այս փուլում կազմակերպության աշխատակիցների կողմից անց են կազմվել դիտարկումներ և ոլորտի պատասխանատուների հետ իրականացվել են հարցազրույցներ: Տեղեկատվության հավաքագրումը նման կերպ հնարավոր է եղել իրականացնել ՀՀ-ում գործող 3 ռազմական կրթահամալիրներից երկուսում՝ «Փոքր Մհեր» և «Մոնթե Մելքոնյանի անվան»: Վերջին՝ ամփոփման փուլում, հետազոտվել և ամփոփվել է հավաքագրված տեղեկատվությունը՝ նախապես դուրս բերված ներպետական օրենսդրության և միջազգային ստանդարտների հետ համեմատության միջոցով: Ինչը հնարավորություն է տվել ներկայացնել կոնկրետ խնդիրներն ու համապատասխան առաջարկությունները:

---

<sup>1</sup> Concluding observations on the initial report of Armenia submitted under article 8 of the Optional Protocol to the Convention on the involvement of children in armed conflict, adopted by the Committee at its sixty-third session (27 May-14 June 2013), available at [http://tbinternet.ohchr.org/Treaties/CRC-OP-AC/Shared%20Documents/ARM/INT\\_CRC-OP-AC\\_COC\\_ARM\\_13871\\_E.pdf](http://tbinternet.ohchr.org/Treaties/CRC-OP-AC/Shared%20Documents/ARM/INT_CRC-OP-AC_COC_ARM_13871_E.pdf)

Առանձին երկրների փորձի ու Կոնվենցիայի ու Արձանագրության ուսումնասիրությունը թույլ է տվել դուրս բերել այն հիմնական չափանիշները, որոնք պետք է պահպանվեն երեխաների կրթության իրավունքը ապահովելիս՝ հատկապես գինվորական դպրոցներում:

ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան, ի թիվս այլ իրավունքների, նախատեսում է նաև երեխայի կրթության իրավունքը: Մասնավորապես, Կոնվենցիայի 29-րդ հոդվածով նախատեսված է երեխայի կրթության իրավունքն ու կրթության իրավունքի իրականացման երաշխիքները<sup>2</sup>: Կոնվենցիայի պրակտիկ կիրառելիության նկատմամբ վերահսկողություն իրականացնող ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեն իր հերթին մանրամասնում է այդ հոդվածով նախատեսված երաշխիքների բնույթն ու առանձնահատկությունները<sup>3</sup>: Կոնվենցիայի 29.1 հոդվածով նախատեսվում է, որ երեխայի կրթությունը պետք է ուղղված լինի երեխայի անհատականության, տաղանդի և մտավոր ու ֆիզիկական կարողությունների լրիվ ծավալով զարգացմանը, երեխային ազատ հասարակության մեջ, փոխըմբռնման, խաղաղության, հանդուրժողականության, տղամարդու և կնոջ իրավահավասարության և բոլոր ժողովուրդների, էթնիկական, ազգային և կրոնական խմբերի, ինչպես նաև բնիկ ազգաբնակչությանը պատկանող անձանց միջև բարեկամության ոգով պատասխանատու կյանքով ապրելուն նախապատրաստելուն և այլն:

Կոնվենցիայի 29-րդ հոդվածի 1-ին մասի կարևորությունն ու նպատակային նշանակությունը դրսևորվում է մի քանի հարթությամբ: Կրթության նպատակը, նախ և առաջ, ուղղակիորեն կապված է երեխայի իրավունքների ու արժանապատվության իրականացման հետ՝ հաշվի առնելով նրա հատուկ կարիքներն ու զարգացման տարբեր հնարավորությունները:

Այս առումով առանձնակի ուշադրություն է դարձվում կրթության իրավունքի իրականացման **գործընթացին**: Սա ներառում է ոչ միայն ուսումնական ծրագրի բովանդակությունը, այլ նաև կրթության կազմակերպումը, կիրառվող մանկավարժական մեթոդներն ու այն միջավայրը, որտեղ տեղի է ունենում կրթության իրավունքի իրականացումը՝ տանը, դպրոցում կամ այլ միջավայրում:

Ինչպես հաստատվել է Կոմիտեի կողմից՝ դպրոց գնալու ուժով ինքնին երեխաները չեն կորցնում իրենց իրավունքները: Օրինակ, կրթության կազմակերպումը պետք է այնպես լինի, որ հարգի երեխաների արժանապատվությունը և հնարավորություն ընձեռի ազատ արտահայտել իր

<sup>2</sup> ՄԱԿ-ի Կոնվենցիա Երեխայի իրավունքների մասին, հասանելի է [http://www.un.am/res/UN%20Treaties/III\\_12.pdf](http://www.un.am/res/UN%20Treaties/III_12.pdf) հասցեում

<sup>3</sup> General Comment Ni.1 (2001), Article 29(1): The aims of Education, UN Committee on the Rights of Child

դիրքորոշումները: Նմանապես, կրթությունը պետք է կազմակերպվի այնպես, որ մի կողմից ապահովվի և հարգանք ներշնչի կարգապահության նկատմամբ, մյուս կողմից՝ այդ գործընթացը ֆիզիկական բռնություններից զերծ մնա:

Կոնվենցիային կից՝ **Զինված հակամարտություններին երեխաների մասնակցությանը վերաբերող արձանագրությամբ** սահմանվում են ռազմական գործողություններին երեխաների ներգրավվածության ու որևէ կերպ մասնակցության արգելքի երաշխիքները: Մասնավորապես, արգելվում է 18 տարեկան չդարձած երեխաների ուղղակի մասնակցությունը ռազմական գործողություններին: Արձանագրության 2-րդ հոդվածով էլ սահմանվում է, որ 18 տարեկանը չլրացած անձինք ենթակա չեն պարտադիր զորակոչի իրենց զինված ուժերում:

Արձանագրության տեքստից և ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեի հանձնարարականներից հետևում է, որ երեխային զինված հակամարտություններին ներգրավվածության վերաբերյալ մտահոգում են նաև հետևյալ հարցերը.

- մինչև 18 տարեկան երեխաների ուսուցումը հատուկ ռազմական ուղղվածություն ունեցող դպրոցներում,
- երեխաներին զենք տրամադրելը, զենք կիրառելու հմտություններ տալը

Զինված հակամարտություններին երեխաների մասնակցության վերաբերյալ Արձանագրությունը զինված ուժերի հսկողության ներքո գտնվող կրթական հաստատություններում սովորողների տարիքային շեմը բարձրացնելու պահանջ չի նախատեսում<sup>4</sup>: Սակայն, **Կոմիտեն ուշադրություն է դարձնում և պահանջում, որ կրթություն ստանալու ենթատեքստի ներքո անչափասհասները նման դպրոցներ հաճախելով՝ չներգրավվեն զինված ուժեր կամ ակտիվ մասնակցություն ցուցաբերեն զինվորական գործողություններին**: Ինչպես ցույց է տվել միջազգային փորձի ուսումնասիրությունը՝ առանձին երկրներում գոյություն ունեն զինվորական դպրոցներ: Սակայն բոլոր այն դեպքերում, երբ անչափասհասները կրթություն ստանալու ընթացքում անցնում են զենքի օգտագործման և զինվորական հատուկ վերապատրաստման դասընթացներ, ապա Կոմիտեի կողմից նման պրակտիկան դիտարկվում է որպես Արձանագրության և Կոնվենցիայի խախտում<sup>5</sup>:

<sup>4</sup> Զինված հակամարտություններին երեխաների ներգրավվածության վերաբերյալ կամընտիր արձանագրություն, հոդված 3.5

<sup>5</sup> Initial Alternative Report on Implementation of Optional Protocol to the Convention on the Rights of the Child on Involvement of Children in armed conflicts, Prepared and submitted by Coalition of civil society organizations, 2009

Զինվորական դպրոցներում կրթության իրականացման համապատասխանելիությունը Կոնվենցիայի և Արձանագրության չափանիշներին յուրաքանչյուր դեպքում ստուգվում է հետևյալ հարցերին տրվող պատասխանների միջոցով՝

- Սովորողների կարգավիճակը՝ արդյո՞ք երեխաները համարվում են զինվորական, և զինված ուժեր երեխաների հավաքագրման հավանականությունը
- Զինվորական դպրոցների ենթակայության, պատասխանատվության և ֆինանսավորման հարցը. դպրոցները գտնվում են Պաշտպանության նախարարության, թե՞ Կրթության և գիտության նախարարության վերահսկողության ներքո
- Զինվորական դպրոցում տրամադրվող կրթության որակն ու բնույթը՝ արդյո՞ք այն համապատասխանում է Կոնվենցիայի 28 և 29-րդ հոդվածներով նախատեսված երաշխիքներին
- Արդյո՞ք դպրոցի ծրագիրը այնպիսին է, որ հարգանք է սերմանում մարդու իրավունքների նկատմամբ
- Զինվորական դպրոցում տրամադրվող վերապատրաստումների բնույթը՝ ներառյալ զենքի կիրառումը
- Զինվորական դպրոցի կարգապահությունը և դպրոցում կիրառվող պատժատեսակները
- Արդյո՞ք սովորողները բողոքարկման մեխանիզմների հասանելիություն ունեն
- Արդյո՞ք երեխաները իրավունք ունեն ցանկացած պահի թողնել դպրոցը և չջարունակել զինվորական մասնագիտացումը
- Խախտումներ թույլ տվող ուսանողները պատասխանատվություն են կրում ընդհանուր կարգով, թե՞ զինվորական դատարաններում
- Արձանագրությունը վավերացրած անդամ երկրներում գոյություն ունի արդյո՞ք ինքնուրույն, բավարար լիազորություններով և ռեսուրսներով օժտված մարմին կամ մեխանիզմ, որը պատասխանատվություն կկրի Արձանագրության կիրառելիության, տեղեկատվության հավաքման և ոլորտի աշխատանքները կոորդինացնելու համար

Ուսումնասիրելով ներպետական օրենսդրությունն ու պրակտիկան վերոնշյալ հարցերի տրամաբանության ներքո՝ վեր են հանվել **խնդիրներ և մշակվել համապատասխան առաջարկություններ, որոնք** ներկայացվում են հետևյալ դասակարգմամբ՝

## **Ընդհանուր դիտարկումներ**

Հայաստանի Հանրապետությունում ռազմաուսումնական կրթական հաստատությունների, մասնավորապես՝ Փոքր Միեր և Մոնթե Մելքոնյանի առնչությամբ **արձանագրվել է հետևյալը.**

Կրթական գործընթացի կազմակերպման գործընթացն ընդհանուր առմամբ, մոդելավորում է ՀՀ զինված ուժերը և զորամասերը՝ հանգեցնելով նաև Արձանագրության պահանջների խախտումներին: Մասնավորապես՝ կրթական հաստատություններում երեխաների զինվորական ողջույնը միմյանց և ուսուցիչներին, ամբողջ օրվա ընթացքում զինվորական համազգեստ կրելը, զինվորական հերթապահությամբ կրթական հաստատությունների մուտք և էլքի անվտանգության ապահովումը, զորամասերում նախատեսված օրվա ռեժիմը, կարգապահության կանոնները, սննդի տրամադրման գործընթացը, ֆիզիկական պարապմունքների ինտենսիվությունն ու որակի համակցությունն այդ հաստատությունների գործունեությունը բնութագրում է որպես զինված ուժերում երեխաների ներգրավվածություն:

Թեև երկուսն էլ հանդիսանում են կրթական հաստատություններ, այնուամենայնիվ դրանց ենթակայությամբ պայմանավորված առկա են կազմակերպական և կրթական գործընթացի կազմակերպման տարբերություններ:

Մասնավորապես՝ Փոքր Միերը գտնվում է ՀՀ Կրթության և գիտության նախարարության ենթակայության ներքո, սակայն իր ֆինանսավորումը ստանում է ուղիղ ՀՀ Կառավարությունից, իսկ Մոնթե Մելքոնյանը գտնվում է ՀՀ Պաշտպանության նախարարության ենթակայության ներքո և իր ֆինանսավորումը ստանում է ՀՀ Պաշտպանության նախարարության բյուջետային դասակարգմամբ: Նման ենթակայությամբ և ֆինանսավորման մեխանիզմների տարբերությամբ պայմանավորված սովորողներին տրամադրվում են տարբեր որակի և քանակի ծառայություններ և ապրանքներ:

## **Օրենսդրություն**

1. «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածը «արգելում է երեխային ներգրավել ռազմական գործողություններին, զինված ընդհարումներին, ինչպես նաև՝ երեխաների շրջանում պատերազմի և բռնության քարոզչությունը, մանկական ռազմականացված միավորումների ստեղծումը»: Միևնույն ժամանակ, նույն հոդվածի 2-րդ պարբերությունը



հասակեցնում է, որ «արգելվում է մինչև 15 տարեկան երեխայի մասնակցությունը ռազմական գործողություններին»: Այսինքն՝ օրենսդիրը տարբերակում է «զինված հակամարտություններ» և «զինված գործողություններ» հասկացությունները և երկրորդի դեպքում թույլ է տալիս 15 տարեկանից բարձր երեխաներին ներգրավել նման գործողություններին: Օրենքով չի կարգավորվում երեխաների կողմից կրթական գործընթացներում զենքի օգտագործման կամ երեխաների ռազմական կրթական հաստատություններում ուսուցման կազմակերպման այն պայմանները կամ սահմանափակումները, որոնք չեն հանգեցնի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի և Արձանագրության սկզբունքների խախտման: Մինչդեռ, ինչպես սահմանված է 1949թ. Ժնևյան կոնվենցիաներով և դրանց պաշտոնական մեկնաբանություններով՝ «յուրաքանչյուր տարաձայնություն, որը ծագում է երկու երկրների միջև և հանգեցնում զինված ուժերի կիրառմանը, համարվում է զինված ընդհարում<sup>6</sup>...»: Զինված գործողությունները, իրենց հերթին, մեկնաբանվում են որպես զենքի ուժով իրականացվող գործողություններ, որոնք պետք է հասնեն որոշակի ինտենսիվության, և որի պարագայում իշխանությունները օգտագործում են զինված ուժերը<sup>7</sup>: Ներպետական օրենսդրության և վերոնշյալ եզրույթների մեկնաբանությունը թույլ է տալիս հանգել այն եզրակացության, որ զինված գործողություններին երեխաներին ներգրավելու դեպքում վերջիններս դառնում են զինված ուժերի մասնիկ, ինչը խախտում է Կոնվենցիայի և կից Արձանագրության պահանջները:

Ընդ որում, հարկ է նշել, որ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 28-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պետությունները ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները երաշխավորելու համար, որ դպրոցական կարգապահությունն իրականացվի երեխայի մարդկային արժանապատվության հետ համատեղելի մեթոդներով և սույն Կոնվենցիային համապատասխան: Ավելին՝ 29-րդ հոդվածի համաձայն՝ երեխայի կրթությունը պետք է ուղղված լինի երեխայի անհատականության, տաղանդի և մտավոր ու ֆիզիկական ունակությունների զարգացմանը՝ դրանց լրիվ ծավալով: Կոնվենցիան պաշտպանում է նաև երեխայի հանգստի, ժամանցի իրավունքը, մասնավորապես՝ ճանաչելով երեխայի իրավունքը՝ իր տարիքին

<sup>6</sup> J. Pictet, Commentary on the Geneva Convention for the Amelioration of the Condition of the Wounded and Sick in Armed Forces in the Field, ICRC, Geneva, 1952, p. 32

<sup>7</sup> How is the Term "Armed Conflict" Defined in International Humanitarian Law? International Committee of the Red Cross (ICRC) Opinion Paper, March 2008

համապատասխան խաղերին ու զվարճալի միջոցառումներին և մշակութային կյանքին ազատորեն մասնակցելու և արվեստով զբաղվելու իրավունքը:

### **Առաջարկություն.**

- Օրենսդրական մակարդակով արգելել մինչև 18 տարեկանների ներգրավվածությունը ռազմական գործողություններին՝ փոփոխություններ կատարելով «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածում: Նույն օրենքով ամրագրել, որ նման ռազմաուսումնական հաստատություններում, որտեղ կրթություն են ստանում անչափահասները, առավելագույնս ապահովվեն Արձանագրությամբ սահմանված երաշխիքները
- Բոլոր այն ենթաօրենսդրական ակտերով, որոնք վերաբերում են ռազմաուսումնական հաստատություններում և հանրակրթական դպրոցներում, և այլ կրթական հաստատություններում նախնական զինվորական պատրաստության կազմակերպելուն<sup>8</sup>, արգելել երեխաների կրթության գործընթացում և այլ կերպ վերջիններիս կողմից զենքի օգտագործումը:
- ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության հետ համագործակցելով՝ անհրաժեշտ է մշակել զենքի մոդելավորված օրինակելի նմուշ, որը ճանաչելի և տարբերակելի կլինի մեկ միասնական չափանիշով և կբացառի տարընկալումները:
- Բոլոր այն ենթաօրենսդրական ակտերով, որոնք վերաբերում են ռազմաուսումնական հաստատություններում և հանրակրթական դպրոցներում, և այլ կրթական հաստատություններում նախնական զինվորական պատրաստության կազմակերպելուն<sup>9</sup>, հստակեցնել, որ երեխաներին հասանելի զենքը ուսումնական է, այսինքն՝ մոդելավորված:
- ներպետական օրենսդրությամբ (մասնավորապես՝ մի շարք ենթաօրենսդրական ակտերով, որոնք վերաբերում են

<sup>8</sup> տե՛ս, օրինակ, տե՛ս ՀՀ պաշտպանության նախարարության և ՀՀ կրթության և գիտության նախարարության թիվ 13.02..2012թ. թիվ 1222-Ն համատեղ հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության հիմնական, ավագ, միջնակարգ հանրակրթական դպրոցներում, վարժարաններում, կրթահամալիրներում և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների նախագորակոչային պատրաստություն» կանոնադրությունը», <http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=73808>, ՀՀ կառավարության 25.08.1999թ. թիվ 532 որոշմամբ հաստատված ՀՀ հանրակրթական դպրոցներում, նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում նախագորակոչային պատրաստության կարգը, <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=91340>

<sup>9</sup> տե՛ս թիվ 3 ֆուտնոտում նշված ենթաօրենսդրական ակտերը:

ռազմաուսումնական հաստատություններում և հանրակրթական դպրոցներում նախնական զինվորական պատրաստությանը) սահմանել, թե ինչ տեսակի զենք (իրական թե մոդելավորված) է օգտագործվում պարապմունքների ժամանակ:

- «Զենքի մասին» օրենքով սահմանել մինչև 18 տարեկան երեխաների կրթական գործընթացների ժամանակ օգտագործվող զենքի հասկացությունը՝ շեշտադրելով «զենքի մակետ» արտահայտությունը:

2. Ըստ մի շարք ենթաօրենսդրական ակտերի<sup>10</sup>՝ յուրաքանչյուր դպրոց կցվում է գորամասի, ինչը հաստատվել է նաև հարցազրույցների ժամանակ, որի ընթացքում երեխաները հնարավորություն են ունենում նաև օգտագործել մարտական զենք:

#### **Առաջարկություն.**

- Կազմակերպել գորամասեր երեխաների բացառապես ճանաչողական այցելություն՝ արգելելով զենքի օգտագործումը,
- վերոնշյալ ենթաօրենսդրական ակտերում հստակեցնել, թե ինչ նպատակով են հանրակրթական, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները, կրթահամալիրները, վարժանները և այլ ուսումնական հաստատությունները կցվում գորապասերի: Այդ նպատակը չպետք է ուղղված լինի երեխաների նախագորակոչային պատրաստությունը բարելավելուն և կազմակերպելուն:

3. Ինչպես տեղեկացվել է հարցազրույցների ընթացքում, ռազմական կրթահամալիրներում սովորող երեխաների ֆիզիկական ծանրաբեռնվածության համար գործում են որոշակի չափորոշիչներ, այնուամենայնիվ այդ չափորոշիչները մեզ հասանելի չեն դարձել՝ լրացուցիչ տեղեկատվություն, թե խոսքը ինչպիսի չափորոշիչների մասին է, չի ներկայացվել:

#### **Առաջարկություն.**

- Անհրաժեշտ է, որպեսզի ենթաօրենսդրական մակարդակով հստակ սահմանվեն ֆիզիկական ծանրաբեռնվածության չափորոշիչները, իսկ ռազմաուսումնական առարկաների ծրագրերի մշակելու լիազորություն ունենա բացառապես ՀՀ կրթության և գիտության նախարարությունը: Չափանիշները պետք է մշակվեն ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով և պարտադիր լինեն բոլոր ռազմաուսումնական հաստատությունների համար, որտեղ սովորում են 18 տարեկանից ցածր

<sup>10</sup> տե՛ս թիվ 2 ֆուտնոտում նշված ենթաօրենսդրական ակտերը:

տարիքի երեխաներ: Այդ չափորոշիչները որոշելիս պետք է հաշվի առնել երեխայի տարիքը, ինչպես նաև Երեխայի իրավունքների մասին Կոնվենցիայի արձանագրությամբ սահմանված սկզբունքները:

#### **Ուսուցչական կազմ և վերապատրաստումներ**

4. Իրականացված հարցազրույցներից պարզ է դարձել, որ ռազմաուսումնական հաստատություններում ռազմական ուղղվածություն ունեցող առարկաները դասավանդվում են համապատասխան մասնագետների կողմից, ովքեր, այնուամենայնիվ, չունեն մանկավարժական կրթություն: Ավելին, այդ մասնագետներն աշխատում են բարձրագույն ռազմաուսումնական հաստատություններում, ինչը նշանակում է, որ նրանց կողմից կիրառվող մեթոդաբանությունը նախատեսված է զինծառայողների համար, իսկ կարգապահությունն ավելի խիստ է:

#### **Առաջարկություն.**

- Ենթաօրենսդրական ակտերով. մասնավորապես՝ ՀՀ պաշտպանության նախարարության և ՀՀ կրթության և գիտության նախարարության թիվ 13.02..2012թ. թիվ 1222-Ն համատեղ հրամանով և ՀՀ կառավարության 25.08.1999թ. թիվ 532 որոշմամբ հստակ սահմանել, որ ռազմական ուղղվածության ուսումնական հաստատություններում, որտեղ սովորում են անչափահասները, ռազմական առարկաներ դասավանդող ուսուցիչները պարտադիր մանկավարժական դասընթացներ և վերապատրաստումներ անցնեն:

  5. Բարձրագույն ուսումնական հաստատություններում պատրաստել ռազմաուսումնական հաստատություններում դասավանդելու հմտություններ ունեցող մանկավարժներ: Հանրակրթական դպրոցներում և ռազմաուսումնական կրթական հաստատություններում հանրակրթական ծրագրերով ուսուցիչների վերապատրաստման հնարավորությունները նույն ծավալով է, ինչ գործում է մնացած ուսուցիչների համար և նախատեսված է օրենքով: Երեխաների իրավունքների պաշտպանության թեմատիկայով դասընթացներն ու վերապատրաստումները, սակայն, իսպառ բացակայում են: Ռազմական ծրագրերով ուսուցիչների վերապատրաստում ընդհանրապես նախատեսված չէ օրենքով:

#### **Առաջարկություն.**

- Հաշվի առնելով ռազմական ուղղվածություն ունեցող կրթական հաստատությունների առանձնահատկությունները՝ այդ հաստատություններում աշխատող բոլոր (ինչպես հանրակրթական

ծրագրերով, այնպես էլ ռազմական ծրագրերով) ուսուցիչների համար տարվա ընթացքում առնվազն մեկ անգամ կազմակերպել պարտադիր վերապատրաստումներ մարդու և երեխայի իրավունքների, միջազգային մարդասիրական իրավունքի, խաղաղաշինության և այլ թեմաներով:

6. **ՆԶՊ առարկան** (որը դասավանդվում է հանրակրթական ծրագրի շրջանակներում ինչպես հանրակրթական դպրոցներում, այնպես էլ ռազմական ուղղվածություն ունեցող ուսումնական հաստատություններում) դասավանդող ուսուցիչները մասնագիտությամբ բարձրագույն ռազմական կրթություն ունեցող սպաներ են, ովքեր թեպետ լավագույնս տիրապետում են ռազմական կրթությանը, սակայն դասավանդման մանկավարժական մոտեցումները դուրս են մնում ուսումնական գործընթացից:

#### **Առաջարկություն.**

- ՆԶՊ առարկայի դասավանդումը կազմակերպելիս ապահովել ուսուցիչների՝ ինչպես ռազմական մասնագիտության, այնպես էլ մանկավարժության պրակտիկ իմացությունը: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է, որպեսզի ՆԶՊ առարկայի ուսուցիչները լինեն ոչ թե միայն բարձրագույն կրթություն ունեցող անձինք, այլ մանկավարժներ, որոնք հատուկ պատրաստվել են ՆԶՊ առարկան դասավանդելու համար:
7. Ըստ մի շարք ենթաօրենսդրական ակտերի<sup>11</sup>՝ հանրակրթական դպրոցները ունենում են զինվորական դեկավար՝ զինդեկ, ով հանդիսանում է Նախնական զինվորական պատրաստություն՝ ՆԶՊ առարկայի ուսուցիչը:

#### **Առաջարկություն**

- Վերասահմանել զինդեկ և ՆԶՊ հասկացությունները՝ առարկան սահմանելով՝ արտակարգ իրավիճակների պատրաստություն, իսկ ուսուցչին սովորականի նման կոչել ուսուցիչ:

### **«ՓՈՔԸ ՄՇԵՐ» կրթահամալիր ԾՐԱԳԻՐ**

<sup>11</sup> տե՛ս ՀՀ պաշտպանության նախարարության և ՀՀ կրթության և գիտության նախարարության թիվ 13.02..2012թ. թիվ 1222-Ն համատեղ հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության հիմնական, ավագ, միջնակարգ հանրակրթական դպրոցներում, վարժարաններում, կրթահամալիրներում և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների նախագորակոչային պատրաստություն» կանոնադրությունը», <http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=73808>

8. Ռազմաուսումնական ծրագրերի ուսումնասիրությունը վկայում է որ, ի հավելումն հանրակրթական դպրոցների ուսումնական ծրագրերի, այստեղ դասերից հետո կազմակերպվում են զինվորական մասնագիտացվածությամբ դասընթացներ, ինչը երեխայի համար լրացուցիչ ծանրաբեռնվածություն է առաջացնում: Առավել ևս, երբ փաստացի բնակվելով դպրոցի տարածքում, երեխաներն ինքուրույն չեն կարողանում իրականացնել իրենց հանգստի և խաղալու իրավունքը:

**Առաջարկություն.**

- Հավասարակշռել զինվորական կրթական հաստատություններում ուսումնական ծրագրերը՝ ապահովելով երեխայի համաչափ և իր տարիքին համապատասխան կրթության իրավունքի իրականացման հնարավորությունը, ինչպես նաև հանգստի իրավունքը: Ռազմաուսումնական կրթահամալիրների ուսումնական ծրագրերը և առարկաները երեխաների իրավունքների կոնվենցիայի կամ երեխայի իրավունքների մասին այլ կարգավորումների մասին ուսուցանում չի նախատեսում: Դասավանդվող «Հասարակագիտություն» առարկան երեխայի իրավունքների կամ Արձանագրության մասին առանձին բաժին չի նախատեսում:

**Առաջարկություն.**

- Ապահովել հանրակրթական և ռազմական ուղղվածությամբ կրթական հաստատություններում երեխաների իրավունքների վերաբերյալ հատուկ դասընթացներ, ինչպես նաև մարդասիրական իրավունքի և խաղաղության մասին առանձին պարապմունքներ:
- Կազմակերպել Արձանագրության ուղղությամբ վերապատրաստումներ ուսուցչական կազմի համար, և մասնավորապես՝ ռազմական ուղղվածություն ունեցող առարկաների ուսուցչական կազմի համար:

**Ժամանց և հանգիստ**

Ռազմաուսումնական կրթահամալիրների սովորողների կապն արտաքին աշխարհի հետ շաբաթվա հինգ օրերի ընթացքում սահմանփակված է, ավելին՝ նրանք զրկված են հեռախոսից և համացանցից օգտվելու հնարավորությունից ուսումնական հաստատություններում գտնվելու ողջ ընթացքում:

**Առաջարկություն.**

- Ապահովել Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի համաձայն երեխայի արտաքին աշխարհի հետ շփման և տեղեկատվության ստացման իրավունքի իրագործումն ամբողջ ծավալով:

9. Սովորողները շաբաթվա ընթացքում միայն 1 անգամ տուն գնալու հնարավորություն ունեն` շաբաթ կեսօրին կարող են դուրս գալ և վերադառնալ կիրակի երեկոյան: Ինչը ընդհանուր առմամբ գրեթե 1 ամբողջ օր է` ներառյալ գնալ-գալու ժամանակահատվածը, հետևաբար, ընտանիքների հետ ժամանակ անցկացնելու հնարավորություններն ավելի քիչ են

#### **Առաջարկություն.**

- Տուն գնալու և ընտանիքի հետ ժամանակ անցկացնելու հնարավորությունը պետք է հնարավորինս մեծ լինի և յուրաքանչյուր շաբաթ առնվազն 2 օր հատկացվի դրան: Ուստի, երեխաներին տուն գնալու հնարավորություն պետք է տրվի ուրբաթ օրը` հանրակրթական ծրագրերով դասերի ավարտից հետո:

10. Երեխաները ամբողջությամբ գտնվում են դպրոցի հսկողության ներքո, սակայն շաբաթ և կիրակի օրերին նրանց իրենց տներ տեղափոխող ընդհանուր տրանսպորտ չկա:

#### **Առաջարկություն.**

Երեխաների տուն տեղափոխումը նույնպես պետք է իրականացվի կրթահամալիրի կողմից տրամադրված ընդհանուր տրանսպորտի միջոցով

11. Կրթահամալիրի աշակերտների ամառային արձակուրդները սկսվում են ավելի ուշ, քան նույն տարիքի մնացած երեխաների արձակուրդները, արդյունքում, տարվա ընթացքում հանգստանալու հնարավորությունը ավելի քիչ է

#### **Առաջարկություն.**

- Կրթահամալիրի ամառային արձակուրդները պետք է սկսվեն և ավարտվեն այն նույն ժամանակահատվածում, որը նախատեսված է հանրակրթական դպրոցների համար

#### **Ընդունելություն**

12. Չնայած կրթական հաստատություններում նշվել է, որ ընդունելությունն իրականացվում է երեխայի համաձայնությամբ և երեխայի կարծիքը հաշվի է առնվում, այնուամենայնիվ, կրթական հաստատություններ ընդունվելու համար դիմում երեխաների փոխարեն ներկայացնում են վերջիններիս ծնողները` որպես օրինական ներկայցուցիչներ: Այս խնդիրն առավել սրվում և

մտահոգությունների տեղիք է տալիս այն պարագայում, երբ կրթական հաստատություններ ընդունվում են առանց ծնողական խնամքի մնացած երեխաները: Ավելին, ըստ ներկայումս գործող կարգի, անհրաժեշտ է ներկայացնել միայն ծնողներից մեկի համաձայնությունը, նույնիսկ եթե երեխան երկկողմանի ծնողագուրկ չէ:

#### **Առաջարկություն.**

- Առանց ծնողական խնամքի երեխաների ընդունելությունը կրթական հաստատություններ կազմակերպել բացառապես յուրաքանչյուր համայնքի ներքո գտնվող խնամակալության և հոգաբարձության մարմնի դիմումի և եզրակացության հիման վրա:
- Ուսումնասիրել և տարբերակված մոտեցում դրսևորել բոլոր այն դիմումների առնչությամբ, որտեղ նկատվում է, որ կրթական հաստատություն երեխայի ընդունելության հիմքն ընտանիքի սոցիալական վիճակն է, որով պայմանավորված առկա է երեխային խնամելու անհնարինություն: Բոլոր նման դեպքերի առնչությամբ դիմում ներկայացնել տվյալ համայնքի հոգաբարձության և խնամակալության մարմնին, ինչպես նաև դրանց վերաբերյալ ընդհանուր տեղեկությունները տրամադրել ՀՀ Կառավարությանը՝ սոցիալական համալիր քաղաքականության իրականացման միջոցով սոցիալական խնդիրները լուծելու համար: Ընդունելությունն իրականացվում է մրցութային կարգով:
- Այն դեպքերում, երբ երեխան երկկողմանի ծնողագուրկ չէ, ապա ընդունելությունը անհրաժեշտ է կազմակերպել՝ հիմք ընդունելով ինչպես հոր, այնպես էլ մոր համաձայնությունը:

13. Ընդունելության համար երեխաները հանձնում են հայոց լեզվի և մաթեմատիկայի, ինչպես նաև ֆիզպատրաստության քննություններ: Լուրջ առողջական խնդիրներ ունեցող այն երեխաները, որոնց առողջական խնդիրները կրթահամալիրի ռեժիմի պատճառով կարող են խորանալ, կամ եթե նման առողջական խնդիրները կարող են խոչընդոտել երեխայի ուսուցմանը:

#### **Առաջարկություն.**

- Սահմանել երեխայի առողջական վիճակի գնահատման հստակ չափանիշներ:
- Սահմանել առողջական վիճակի այն նկարագրերը, որոնց պարագայում երեխաների ընդունելությունը կարող է մերժվել:



- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ երեխաներն առավել զգայուն են իրենց մոտ առկա խնդիրների վերաբերյալ շրջակա միջավայրի կարծիքի նկատմամբ, ինչպես նաև այն հանգամանքը, որ առողջական խնդիրների պատճառով հանրակրթական դպրոցներ երեխաների ընդունելությունը չի կարող մերժվել, ապա ռազմական կրթական հաստատություններում երեխայի ընդունելությունն առողջական խնդիրների պատճառով մերժելիս, տրամադրել խիստ զգույշ ձևակերպումներ:

14. Կրթահամալիրում սովորող երեխաների ընդհանուր թիվը 2014 և 2015թթ. գերազանցել է թույլատրելի թվից, ինչը կարող է բացասաբար անդրադառնալ կրթահամալիրին ըստ **նախատեսված** թվով սովորող աշակերտների համար հատկացվող ռեսուրսների և **փաստացի** սովորողների թվի առնչությամբ:

**Առաջարկություն.**

- Անհրաժեշտ է ընդունելությունն իրականացնել բացառապես նախատեսված հնարավորությունների սահմաններում:

**Կարգապահություն և պատասխանատվություն**

15. Կրթահամալիրի կանոնադրությունը նախատեսում է մի շարք կարգապահական պատասխանատվության ձևեր, որոնց շարքում է նաև.

«...4) արտահերթ վերակարգում աշխատանքի նշանակում՝ մինչև 1 օր ժամկետով.

5) կրթահամալիրի տարածքից դուրս գալու հերթական իրավունքից զրկում»:

Նման պատասխանատվության միջոցների կիրառումն ու իրավական ակտով դրանց ամրագրումը խախտում է Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի պահանջները և կարող է դիտարկվել որպես երեխայի նկատմամբ անօրինական պատիժ: Առավել ևս, երբ հանրակրթական դպրոցներում պատասխանատվության նման միջոցներ չեն գործում:

**Առաջարկություն.**

- Կանոնադրության մեջ կատարել փոփոխություններ և հանել կարգապահական պատասխանատվության այս եղանակները, քանի որ առաջինը փաստացի հարկադիր աշխատանք է անչափահասի նկատմամբ, իսկ երկրորդը՝ երեխայի իրավունքների ոչ իրավաչափ սահմանափակում:

16. Կրթահամալիրում բացակայում են պատասխանատվության ենթարկելու դեպքում այդ որոշումը բողոքարկելու մեխանիզմները: Ծնողը իրավունք ունի

բողոքարկելու կրթահամալիրի աշխատողների ապօրինի գործողությունները, սակայն սովորողին նման իրավունք կանոնադրությամբ ուղղակի տրված չէ:

**Առաջարկություն.**

- Առաջարկվում է ներդնել բողոքարկման մեխանիզմներ և ապահովել պրակտիկայում դրանց արդյունավետ իրագործումը:

17. Կրթահամալիրում պատասխանատվության միջոցների միասնական մոտեցում և պրակտիկա չկա: Ուսուցիչը կարող է ինքնուրույն որոշել, թե ինչպիսի պատասխանատվության պետք է ենթարկվի աշակերտը, ինչը կարող է մեղմ կամ խիստ լինել, սակայն կանոնադրությամբ նախատեսված չլինի:

**Առաջարկություն.**

- Բացառել ուսուցիչների կողմից երեխաներին պատասխանատվության ենթարկելու կամայական դրսևորումները:

18. Կարգապահական տույժեր տալու կարգն ու պայմանները սահմանում է խորհուրդը, սակայն պարզ չէ, թե ինչ ընթացակարգով է դա իրականացնում և ով կարող է ենթարկել կարգապահական տույժի:

**Առաջարկություն.**

- Կատարել փոփոխություններ կանոնադրության մեջ՝ բացառելով երեխայի պատասխանատվության ենթարկելու այնպիսի մոտեցումները, որոնք հակասում են երեխայի իրավունքներին:

**Սանիտարահիգիենիկ պայմաններ, շենքային պայմաններ և անձնական տարածք**

19. Կրթահամալիրի աշակերտները յուրաքանչյուր օրվա ընթացքում ակտիվ ֆիզիկական վարժություններ են կատարում, սակայն շաբաթվա ընթացքում միայն մեկ անգամ են լողանում:

**Առաջարկություն.**

- Առաջարկվում է լողանալու հաճախականությունը մեծացնել:

20. Կրթահամալիրի սանհանգույցի հնարավորությունները չեն համապատասխանում սովորողների թվաքանակին, ինչը կարող է հերթերի և կոնֆլիկտների պատճառ դառնալ:

**Առաջարկություն.**

- Անհրաժեշտ է մեծացնել սանիտարահիգիենիկ պայմանների հնարավորությունները, ավելացնել լվացարանների և սանհանգույցների թիվը:

21. Կրթահամալիրի Քանաքեռավանի մասնաճյուղի շենքը հին է, պայմանները հարմարեցված չեն կրթություն ստանալու համար, դասասենյակները

չափսերով փոքր են, լոկալ ջեռուցում և օդափոխության համակարգ չի գործում: Իսկ սովորողների ննջասենյակները նման են գորանոցներին, մահճակալները երկաթյա և երկհարկանի են՝ միմյանց միջև չնչին տարածությամբ, իսկ դասապատրաստման համար ննջասենյակներում տարածք հատկացված չէ:

#### **Առաջարկություն.**

- Առաջարկվում է երկրորդ մասնաշենքում իրականացնել շենքային պայմանների բարելավման և վերանորոգման աշխատանքներ:

22. Կրթահամալիրի Նուբարաշենի մասնաշենքում երեխաների ննջասենյակների դռները ապակեպատ են, ինչը հնարավորություն է տալիս դրսից տեսնել ննջասենյակների ներսը, իսկ Քանաքեռավանի մասնաշենքի ննջասենյակներում տեղադրված են տեսախցիկներ, որոնք շուրջօրյա տեսաձայնագրություն են իրականացնում: Ինչով պայմանավորված՝ երեխաները չունեն անձնական տարածք:

#### **Առաջարկություն.**

- Վերացնել երեխաներին տեսախցիկների միջոցով հսկելու պրակտիկան, ննջասենյակների դռների ապակիները հանել և փոխել այնպես, որ դրսից տեսանելի չլինի սենյակի ներսը

#### **Մնունդ**

23. Կանոնադրության 129-րդ կետի համաձայն՝ սովորողներին սնունդը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի նոյեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետության հատուկ սպառողների սննդի օրական միջին նորմաների մասին» N 706 որոշման 1-ին կետով սահմանված կարգով: Սակայն պետք է նշել, որ հետազոտությունն իրականացնելուց հետո, վերոնշյալ որոշման 1-ին կետն ուժը կորցրել է: Ընդունվել է ՀՀ կառավարության 03.12.2015թ. թիվ 1456 որոշումը՝ «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության և Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգի ծառայողների, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության փրկարարական ծառայությունների պարեկային ապահովության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թ. նոյեմբերի 11-ի թիվ 706 որոշման մեջ փոփոխությունների կատարելու մասին»: Որոշումն ընդունելուց հետո Կանոնադրության մեջ փոփոխություններ չեն կատարվել, և ներկայումս պարզ

չէ, թե ինչ ընթացակարգով, ինչ չափով է երեխաներին սնունդ մատակարարվում:

**Առաջարկություն.**

- Անհրաժեշտ է սահմանել երեխաների տարիքին և կարիքներին համապատասխան սննդի տրամադրում՝ չափաբաժինների և որակի առավելագույն պահպանմամբ:

\*\*\*

24. Կրթահամալին ունի երկու մասնաշենք, որոնք միմյանցից հեռու է, սակայն այնտեղ առկա է հոգեբանի միայն մեկ հաստիք, ինչը չի բավականացնում բոլոր երեխաներին համապատասխան վերաբերմունք ցուցաբերելուն:

**Առաջարկություն.**

- a. Կրթահամալիրում աշխատող հոգեբանների հաստիքների թիվը դարձնել առնվազն երկուսը, որպեսզի յուրաքանչյուր մասնաշենքում լինի մեկական հոգեբան:

**ՄՈՆԹԵ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ**

25. Վարժարանը բնույթով փակ հաստատություն է և վերջինիս հետ համագործակցություն ու կապ հաստատելն առավել բարդ է: Օրինակ՝ այս կրթական հաստատությունում սովորողների թվի վերաբերյալ տեղեկատվությունը չի տրամադրվել՝ պատճառաբանվելով, որ դա գաղտնիք է հանդիսանում: Վարժարանն ունի գորամասի կարգավիճակ. ռեժիմը, տեսքը ինքնին նման է գորամասի:

**Առաջարկություն.**

- Հստակեցնել կրթական հաստատության գործունեության մասին ղեկավար կազմի մոտ առկա պատկերացումները՝ ընդգծելով, որ
  - a) Որպես կրթական հաստատություն վարժարանը չի կարող և չպետք է առաջնորդվի գորամասերի կամ զինված ուժերի գործունեության համար սահմանված կանոններով և չափանիշներով:
  - b) Թեև կրթական հաստատությունը գտնվում է ՀՀ Պաշտպանության նախարարության ներքո, այնուամենայնիվ, դա որևէ կերպ չի վերափոխում կրթական հաստատության գործունեության միակ նպատակը՝ երեխայի տարիքին և ֆիզիկական կարողություններին համապատասխան կրթության գործընթացի կազմակերպումը:

c) Կրթական հաստատությունում երեխայի իրավունքների ցանկացած սահմանափակում հանգեցնում է երեխայի իրավունքների խախտման, որը չի կարող արդարացվել այն հանգամանքով, որ կրթական հաստատությունը հաստուկ առաքելություն ունի: Բացառել երեխաների կողմից կրթական գործընթացին մասնակցելու ժամանակ զինվորական համազգեստի պարտադիր կրելու պայմանը:

- Վերացնել ՀՀ ԶՈՒ զինվորական համազգեստով երեխաների կրթություն ստանալու պրակտիկան:

### **«Փոքր Մհեր» կրթահամալիրի և «Մոնթե Մելքոնյանի անվան վարժարանի» ռեժիմի վերաբերյալ մտահոգությունները**

26. Կրթահամալիրի ռեժիմը ամբողջությամբ՝ վերկացից մինչև քնի ժամը, նմանեցված է զինված ուժերում տիրող ռեժիմին, ինչը խախտում է երեխայի՝ իր տարիքային առանձնահատկություններին համապատասխան առօրյա անցկացնելու պահանջին<sup>12</sup>: Բացի այդ, նման ռեժիմի պահպանումը երեխաների ուսուցման ողջ ընթացքը նմանեցնում է զինվորական ծառայության ռեժիմին, ինչը նույնպես անընդունելի է և հակասում է կամրնտիր արձանագրությամբ նախատեսված երաշխիքներին: Մասնավորապես, քիչ ժամանակ է հատկացվում երեխայի հանգստին և ժամանցին, փոխարենը շեշտը դրվում է ֆիզիկական ու ռազմական պատրաստվածության վրա: Առանձին պետք է շեշտել, որ Մոնթե Մելքոնյանի անվան ռազմաուսումնական կազմակերպությունում երեխաները ամեն օր դիտում են միայն «Հանրային առաջին» հեռուստալիքը և միայն «Հայլուր» հեռուստահաղորդումը, իսկ «Փոքր Մհեր» կրթահամալիրում երեխաները դիտում են «Զինուժ» և «Հայլուր» հաղորդումները:

#### **Առաջարկություն.**

- Կրթահամալիրի ռեժիմը հարմարեցնել երեխայի տարիքային առանձնահատկություններին համապատասխան, և հավասարակշռել երեխաների պարապմունքներն երեխաների հանգստի, ժամանցի և խաղերի համար համապատասխան ժամեր նախատեսելով: Հաշվի առնել այն հանգամանքը, որ ռազմականացված մթնոլորտի առկայությունն ինքնին կարող է դիտարկվել զինված հակամարտություններին երեխաների նախապատրաստություն, ինչն

<sup>12</sup> General Comment Ni.1 (2001), Article 29(1): The aims of Education, UN Committee on the Rights of Child

անթույլատրելի է: Կրթահամալիրում երեխաները ներգրավված են շուրջօրյա՝ զինվորականին հատուկ հերթապահության մեջ:

**Առաջարկություն.**

- Անհրաժեշտ է իսպառ վերացնել երեխաների կողմից շուրջօրյա հերթապահություն իրականացնելու պրակտիկան:

27. Կրթության իրականացման գործընթացը ամբողջությամբ հիմնված է զինճառայության անցկացման սկզբունքների վրա, օրինակ՝ դասարանները բաժանված են դասակների, իսկ վերջիններս՝ ջոկերի: Դասանցկացման նման մոտեցումը երեխայի հոգեբանությունն ու դաստիարակությունը տանում է զինվորական ուղղությամբ:

**Առաջարկություն.**

- Վերացնել դասարաններում նման ստորաբաժանումների առկայությունը: